

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ԵՎ ԲԱԼԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ և Բալթյան երկրների Երկաթուղային Տրանսպորտի Խորհրդի 44-րդ նիստի 17 մասնակիցների՝ ուղեկցությամբ «Հայկական երկաթուղի» ընկերության գլխավոր տնօրեն Արարատ Խրիմյանի:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարևորեց նրանց ծառայությունը և առաքելությունը՝ նպաստելու ոչ միայն Խորհրդի անդամ երկրների տնտեսական զարգացմանը, այլև ժողովուրդների միջև բարի հարաբերությունների և համագործակցության սերտացմանն ու զորացմանը:

ԱՊՀ և Բալթյան երկրների Երկաթուղային Տրանսպորտի Խորհրդի անդամների անունից Նորին Սրբությանն, ընդունելության համար, շնորհակալություն հայտնեց «Ռուսաստանի երկաթուղիներ» ընկերության նախագահ Վլադիմիր Յագունինը՝ ներկայացնելով նաև Խորհրդի հերթական նիստի նպատակը և աշխատանքները:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ 27-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների արդարադատության նախարարների 27-րդ համաժողովի շուրջ 150 մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի:

Ողջունելով համաժողովի մասնակիցների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը նրանց ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոնի պատմությունը և առաքելությունը հայ ժողովրդի կյան-

քում: Անդրադառնալով համաժողովի՝ «Տուժողներ՝ կարգավիճակը, իրավունքները և օժանդակությունը» թեմային՝ Նորին Սրբությունը մասնավորաբար ասաց. «*Այսօր տուժածների իրավունքների և օգնության խնդիրը որպես մարդկությանը հուզող հրատապ հարց նաև դարձել է ձեր քննարկումների նյութ, սակայն այդ խնդիրը ուղեկցել է Եկեղեցուն հիմնադրման առաջին իսկ օրից, առաջին քրիստոնեական համայնքների ձևավորման շրջանից: Միշտ եկեղեցականն առնչվել է այդ խնդիրներին և փորձել իր օգտակարությունը, զորակցությունը բերել նման իրավիճակներում գտնվող մարդկանց*»: Նորին Սրբությունը նշեց, որ ներկայիս աշխարհի բարդ իրավիճակներում և զարգացումներում այդ երևույթներն ավելի մտահոգիչ են իրենց ընդգրկումով և հաճախակի դրսևորմամբ, և այսօր Եկեղեցին իր առաքելության հիմնական ոլորտներից մեկն է դիտում տուժողներին օգտակար լինելը: Այդ համատեքստի մեջ Վեհափառն առավել կարևորեց երևույթի հոգեբարոյական հետևանքների վերացման անհրաժեշտությունը, ինչում պետք է Եկեղեցին օգտակարություն ցուցաբերի:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հոկտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ռումինիայի Հանրապետության դեսպան Նիկոլաե Իորդակեին:

Հրաժեշտ տալով Ամենայն Հայոց Հայրապետին՝ պրն Իորդակեն շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ իր և իր երկրի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի համար: Դեսպանը վստահություն հայտնեց, որ Հայաստան-Ռումինիա հարաբերություններն այսուհետ ևս կզարգանան ինչպես պետական, այնպես էլ միջեկեղեցական մակարդակներով:

«*Մեր բարեկամությունը դարերով է փորձված: Եվ վստահ ենք, որ այն հետագայում առավել կսերտանա ու կխորանա*»,- իր հերթին ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ ամեն տարի Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ մեկնում են Ռումինիա՝ բարձրագույն ուսումը շարունակելու նպատակով:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը նորանոր հաջողություններ մաղթեց դեսպանին հետագա առաքելության ընթացքում:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Անրի Կյունիին:

«*Մենք անչափ ուրախ ենք, որ այսքան տարիներ առիթ ունեցանք վայելելու Ձեր*